

ՄԻ ԵԿՆԱՐԿ ԽԾԶԾՈՒՐ ԸԲՈՎԵՍՆԻ ԳՐԱԿԱՆ
ԵՒ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆԻ ԳՈՐծՈՒՆԿՈՒԹԻՒՆՆ ՎԵՐԱՑ

(Նորա ծննդեան հարիւրամնակի առթիւ)

Շատ հին է Հայոց գրականութեան սկզբնաւորութիւնը. նա ոկտում է հէնց հայկական տառերի գիւտից անմիջապէս յետոյ։ Խնչումն էր կայանում հնումը այդ գրականութիւնը։ Տառերի գիւտից անմիջապէս յետոյ թարգմանում է Յունարէնից և Ասորերէնից Աստուածաշունչը և միայն այդ ժամանակից նա հասկանալի է գառնում ժողովրդեան. որովհետև մինչև այդ չունենալով հայերէն Աստուածաշունչ, ժողովրդեան մեծ մասը անմասն էր մնում ս. գրից, որով և Հայաստանում քրիստոնէութեան հաստատուիլը յետաձդւում էր, ուշանում։ Քրիստոնէութիւնը Հայաստանում տարածելու պահանջից սկիզբն առան հայերէն տառերը, ուստի և գիւտից անմիջապէս յետոյ թարգմանում է Աստուածաշունչը և սուրբ հայրերի գրուածքները, հիմնում են դպրոցներ, որտեղ բացատրում է ժողովրդեան քրիստոնէութեան էութիւնը և այդպիսով միայն այդ վեհ կրօնը հաստատում է Հայաստանում։

Այսպիսով մեր գրականութեան սկզբնաւորութիւնը լինում է կրօնական ուղղութեամբ։ Գրականութիւն ասելով հնումը հասկացում էր ս. հայրերի գրուածքները և գիւտաւորապէս թարգմանական։ Այդ կրօնական ուղղութիւնը երկար շարունակում է մեր մէջ և ապա հետո զհետէ այդ կրօնականին աւելանում է զուտ պատմակա-

նը. առաջ են դալիս մարդիկ, որոնք սկսում են արձաւնագրել Հայոց պատմութիւնը. դոքա մեր հին պատմագիրները. նոքա արձանագրում էին մեր կեանքի պատմական անցքերը միայն. հնումը գրականութիւն ասելով հասկացւում էր զանազան թագաւորների—պատերազմների և կամ պատմական ուրիշ խոշոր դէպքերի արձանագրութիւնը: Բայց գրականութիւն այն մոքով, ինչպէս այժմս է, գոյութիւն չունէր: Ճին գրականութեան մէջ մենք չենք դտնում ժողովրդական կեանքը իր բոլոր մանրամանութիւններով: Դրականութիւնը այդ ուղղութեամբ շարունակում է երկար դարեր, երբեմն հասնելով իւր ծաղկման գագաթնակէտին, ինչպէս Երդ դարում:

Մինչեւ ԺԹ դարը մեր գրականութիւնը ժողովրդականութիւն բոլորովին չի ստանում, թագաւորում է նոյն կրօնական ոգին, և ինչ որ գրւում էր, գրաբար լեզուով էր գրւում, որ արդէն ժողովրդեան բոլորովին անհասկանալի մի լեզու էր:

Մտնում ենք ԺԹ դարը: Այդ դարը նշանաւոր է ոչ միայն ամբողջ Եւրոպայի քաղաքակրթութեան, լուսաւորութեան և գրականութեան համար, այլ և մեծ ազդեցութիւն է ունենում հայկական կեանքի վերայէջայի մտաւոր անդաստանը ԺԸ դարում շատ անմիտաթար վիճակի մէջ էր, հայ ժողովուրդը խարիսափում էր տղիտութեան թանձր խաւարի մէջ: Գիտութիւն, ուսում միայն վանքերում է կենդրոնացած, ամեն ինչ գրւում է գրաբար լեզուով, որ ժողովրդի համար բոլորովին մի խորթ բան է. ժողովուրդը գրքի լեզուն չի հասկանում. երկու լեզու միաժամանակ տիրապետում էին՝ խօսակցական և գրաւոր: Վերջինս ժողովրդեան համար մի մեռեալ գանձ էր: ԺԹ դարի առաջին և երկրորդ քառորդը մեր պատմութեան և գրականութեան համար նոր շրջանի հիմնաքար դարձան: Պահանջը մարդիկ ծընեց: Ծնուեց Արովեանը և հնչեց նորա հուժկու «Արիք

արտաքսը»: «Թէկուղ ռաերէն, նեմեցերէն, եա ֆրանցուղերէն գրած, թէկուղ գրաբար. տասնը կ'ըլի որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թէկուղ իմ դըրածը, թէկուղ մի քամու ջաղաց: Ախր որ ազգը էն լեզուղվը չի խօսում, էն լեզուն չի հասկանում, սաքի հէնց բերնիցդ էլ ոսկի վեր ածիր, ում պէտք է առես»:

Ահա այն կոչը, որ Արտվեանն իւր կեանքի շէմքը կոխելու հէնց առաջին օրը արտասանեց:

Հէնց մանկութիւնից երկու իդճ ունէր Արտվեանը. ա) ձեռք բերել, որքան կարելի է, մեծ գիտութիւն, և բ) բոլոր իւր մտաւոր կարողութիւնը, գիտութիւնը գործադրել իր աղդի պէտքերին, որ մինչ այդ թաղուածէր իսոր ագիտութեան մէջ: Եւ ի՞նչպէս կարող էր մի ազգ ունենալ մտաւոր շարժում, հոգեկան կեանք, այն բոլոր բռնութիւնների տակ, որին ենթակայ էր Հայաստանը դարեր շարունակ: Այնտեղ, ուր չկայ կեանքի, գոյքի ապահովութիւն, այնտեղ, ուր տանտէրը տէր չէ իւր ընչքին, ամուսինը իւր կնոջ, հայրը իւր աղջկան, չի կարող լինել մտաւոր շարժում, չի կարող լինել կուլտուրական յառաջադիմութիւն: Այդպէս էր Հայաստանի դըրութիւնը մինչև ԺԹ. դարի սկիզբը. նա դարեր շարունակ ենթակայ էր Արաբների, Սելջուկների, Թուրքերի, Մօնղոլների արշաւանքին և մինչև ԺԹ դարու սկիզբը հեծում էր պարսիկների բռնութեան տակ:

Բացւում է արշալոյսը. 1801 թ. Անդրկովկասում հաստատում է Ռուսաց տիրապետութիւնը. Աղէքսանդր Ա կայսրը վերջ է դնում բռնութիւններին և ասպարէզ է տալիս կուլտուրական յառաջադիմութեան: Թէև ԺԹ դարում հայ գրականութիւնը կեանքի նշաններ ցոյց տալիս էր արևմտեան Հայաստանում, Վենետիկում և Պոլսում նա պահում էր իւր կենսունակութիւնը, բայց մեզանում, արևելեան Հայաստանում գրագիտութիւնը շատ խղճալի դրութեան մէջ էր:

Ամբողջ Անդրկովկասում երկու թեմերում միայն կային

դպրոցներ, որտեղ տիրապետում էր խալիֆայականութիւնը։ Վերջապէս 1824 թ. ներսէս Աշտարակեցի կաթուղիկոսի ջանքերով Թիֆլիսում բացւում է ներսիսեան դպրոցը, իսկ Մոսկուայում երախտագիտութեան արժանի Լազարեան եղբարք բաց են անում Լազարեան ճեմարանը։ Այս երկու դպրոցներն են, որ սկիզբն են դնում հայկական կանոնաւոր կրթութեան, թէև նոյց մէջ էլ տարիներ շարունակ թագաւորում էր միայն կրօնական ուղղութիւնը։

Այս պատկերն էր ներկայացնում հայի մտաւոր առպարէզը, երբ 1804 թուին Երևանի մօտ, Քանաքեռ գիւղում ծնուեց Խաչատուր Աբովեանը մի բարեպաշտ և առաքինի, նահապետական ընտանիքի մէջ։ Նորա ծնողները ցանկութիւն ունենալով իրանց որդուն հոգեսորական դարձնել, 10 տարեկան Խաչատուրին բերում են Ս. Էջմիածին և յանձնում Հայոց կաթուղիկոսին, որը սիրով ընդունում է նորան և իրբե հայր խնամում։ 6 տարի Խաչատուրը մնում է վանքում և այնտեղ մեծանում կրօնական ուղղութեամբ, բայց վարփուն պատանուն միայն կրօնական գիտութիւնը բաւականութիւն չի տալիս, նա ձգտում է միշտ աւելին, միշտ ժամանակակիցը սովորելու և ահա 1824 թ. նորան տեսնում ենք Թիֆլիսի դըպրոցում աշակերտելիս։

Մի քանի տարի մնալով այդ դպրոցում և վարժուելով մի քանի նոր առարկաների մէջ, ինչպէս ոռւսերէն, Փրանսերէն, պարսկերէն, նա թողնում է և այդ դպրոցը և վերադառնում էջմիածին և այդտեղ ջանք է գործ դնում դնալ Վենետիկ, Միխթարեանց մօտ իւր ուսումն ստանալու ծարաւին յագուրդ տալու. բայց դորան հակառակում են կաթուղիկոսը և հոգեսորականութիւնը, երկիւղ կրելով, որ նա այնտեղ կընկնի կաթողիկոների գիրկը և այդպիսով նրան չի յաջողւում դնալ Վենետիկ։

Բայց ջուրը իւր ճանապարհը գտնում է. նրա անվերջ փափագը կատարելագործուելու շէր կարող չքանակ.

նա պէտք է հասնէր իւր նպատակին. և ահա կարծես հէնց Աբովեանին իւր նպատակին հասցնելու համար 1829թ. Հայաստան է գալիս Դորպատի պրօֆէսսօր Բարրօտը Մասիսի դագաթը բարձրանալու։ Էջմիածնում կաթուղիկոսը սարկաւագ Աբովեանին է յանձնարարում թարգման լինել Բարրօտին իւր ճանապարհորդութեան ժամանակ։

Ահա այս ճանապարհորդութեան միջոցին Աբովեանը ցոյց տուեց իւր բոլոր յատկութիւնները հետաքրքիր և բարի Բարրօտին, որը այնքան դրաւուեց հայ, արեւելցի, ընդունակ պատանիով, որ ցանկացաւ նորան տանել իւր հետ Դորպատ ուսման մէջ կատարելագործելու համար։ Աբովեանը ցնծութեան մէջ էր. նորավարուցուցուայ ցանկութիւնը՝ շատ սովորել և ապա ազգին պէտքական անդամ դառնալ՝ իրագործելու վերայ էր։ Այսպիսով Բարրօտի միջնորդութեամբ Աբովեանը լուսաւորութեան մինիստր Լեինի միջոցներով ուսանում է Դորպատում։ 1830 թ. նա արդէն Դորպատումն է, միշտ երևելի ուսուցչապետների շարքում, որոնք սրան զարմացնում էին իրանց բարի զդացումներով և հայրական խնամքով։ Դորպատը, գերմանական այս փոքրիկ քաղաքը, չդիտեմ բաղդի ինչ բերմամբ, եղել է մեզ՝ Ռուսահայերիս համար մի մեծ բարերար, որովհետեւ մեր երևելի գործիչներից շատերը՝ Աբովեան, Նազարեան, Պատկանեան և այլք այստեղ, այս գերմանացի լայն հայեացքի տէր մարդկանց շրջանում են մտաւոր սնունդ ստացել և կազմակերպել իրանց բնաւորութիւնը, իրանց հայրենասիրական ոգին։ Այստեղ են հաւաքել այն ձքնաղ ծաղիկների հիւթը և ապա ջանասէր մեղուի նման թռել եկել հայաստան և նոյն հոտաւէտ ծաղիկները պատուաստել հայկական պարարտ հողի վերայ. որոնք ծլելով և ծաղկելով տուել են 1-ին 50,100 արդիւնք և այդ ծաղիկներից հիւսած պսակներով զարգարել անմոռանալի աշխատաւորների հանճարեղ գլուխները։

Խակապէս չի կարելի չղարմանալ և միւնոյն ժամանակ չհիանալ գերմանացի այն մի խումբ ուսուցչապետների վրայ, որոնք շրջապատել էին Աբովեանին. կարծես կուլտուրական, աղատ մաքի աէր այս գերմանացիք դիտմամբ գնացել էին Հայաստան, փետել այնտեղից մի վայրի ծաղիկ և բերել էին Դորապատ պատուաստեղու աղնիւ հիւթերով, որպէսզի նորից տանեն այդ ծաղիկը Հայաստան և նորանով այնտեղ պատուաստեն այլևս շատ ծաղիկներ, ու իրանք մխիթարուին իրանց բարի գործի պտուղները տեսնելով:

Այն, այն էր երևում մարդասէր գերմանացիների վարմունքից, որ նորա երոպական լուսաւորութիւնը տարածելու համար էին ընտրել Աբովեանին և նորան տալով լուսաւորութեան բոլոր ճիւղերը, միւնոյն ժամանակ զարդացնում էին նորա մէջ այն հոգին, որ նա պարտական է իր ստացածը հաղորդել ուրիշներին, իր եղբայրներին, տգիտութեան մէջ խմորուած հայերին։ Ահա մեծութիւն, ահա առաքինութիւն։ Ուրիշ կերպ չի կարելի հասկանալ գերմանական այն շրջանի վերաբերմունքը գէպի Աբովեանը։ Գերմանացի այս պրօֆէսօրների ջանքն էր ոչ միայն դիտութեամբ հարստացնել Աբովեանին, այլ և տալ նորան աղնիւ սիրտ, առաքինի վարք ու բարք, գործելու անվերջ եռանդ և այլն։

5—6 տարի Աբովեանը մնաց Դորապատում, դիտութեան այս վայրում իւհէալիստ մարդկանց այսպիսի շըրջանում։ Ի՞նչ ստացաւ, այստեղ Աբովեանը։ — բազմակողմանի դիտութիւն, աղնիւ սիրտ, առաքինի վարքուբարք, անհուն սէր գէպի իւր հայրենէքը, անվերջ գործելու եռանդ։

Եհա այսպիսի պատրաստութիւններով 1836 թ. Աբովեանը հրաժեշտի համբոյրներով բաժանւում է իւր պրօֆէսօրներից և գալիս է Հայաստան, տողորուած վսեմ նպատակներով, լինել դաստիարակ և ուսուցիչ իւր աղգի խաւարի մէջ թաղուած զաւակներին։ Բայց լուսութ

ճրքան յտուախաբուեց նա, երբ հանդիպեց սարսափելի խոչնդոսների. նրա վարվուան յօյսերը իրականութիւն չդտան. հայութեան կեգրոնը չընդունեց նրան, Հայը չճանաշեց իւր արժանաւոր ուսուցչին, իւր մեծ մարդուն: Գալով թիֆլիս, այնաեղից նա շտապեց Ս. Էջմիածին, այնաեղ գործադրելու իւր ոյժը կրթական ասպարիդում, նա ցանկացաւ այդտեղ հաստատել դպրոց և թափել իւր բոլոր կարողութիւնը. բայց ահա ինչ է լուսմ նա ժամանակակից Կարբեցի Յովհաննէս կաթուղիկոսից. «Դու լաւ խմորել կարես զմիսս անմեղաց, այլ կրթել զնոսա չէ քո գործա» Կաթուղիկոսը այսպէս է ասում: որովհետեւ Արովեանի մասին հոգեորականութիւնը կազմել էր այն կարծիքը, որ իբրև թէ նա գերմանական շրջանում ընդունել էր բաղրաքանութիւն, որ այժմ ուղղում էր տարածել և Հայաստանում:

Եւ ահա այսպէս Արովեանը բեկուած սրասով նորից վերադառնում է Թիֆլիս և այստեղ վանքի խցում հաւաքում է աշակերտներ և զեկավարում նոցա իր գիտեցած ուղղութեամբ: Բայց Արովեանը ծնուած չէր փոքր գործ կատարելու. նա չի բաւականանում գորանով և ասպարէղ չդտնելով իւրայինների մէջ գործելու, ստիպուած յանձն է առնում Թիֆլիսի նահանդական դպրոցի տեսչի պաշտօնը 1837 թ: Այդ ևս բաւականութիւն չի տալիս Արովեանին, նա բաց է անում մասնաւոր պանսիօն և ընդունում է այդտեղ հայ և վրացի աշակերտներ և այդ պանսիօնը հասցնում է իւր ծաղկման գաղաթնակէտին, որի մասին մեծ գովասանքով խօսում է գերմանացի գիտնական Վագները: Արովեանը մինչև 1844 թ. մնալով Թիֆլիսում և գործելով ուսուցչական ասպարիդում, ձանձրացած զանազան թշնամութիւններից, թողնում է Թիֆլիսը և տեղափոխուում Երևան, այժմ Երևանի նահանդական դպրոցի տեսչի պաշտօնով: Այստեղ ևս նա գործ է զնում իւր բոլոր ուսուցչական հմտութիւնը, բոլոր եռանդը և այդպիսսվ նորան յա-

ջողլում է պատրաստել մի նոր սերունդ, որ բոլորովին ջոկում է հնից, թէ իւր հասկացողութեամբ, և թէ իւրանց կեանքի եղանակով։ Այսպիսով ուրեմն Արովեանն եղաւ այն վերանորոգիշը, որ փոխեց մեր կրթական տիսուր իրականութիւնը եւ հիմք դրեց լուսաւոր եւրոպական կրթութեան։

Միայն դաստիարակչական, ուսուցչական ասպարէցը չէ, որով Արովեանն անմահացաւ մեր մէջ նրա գործունէութեան փառքն ու պսակը իր գրուածքներն են, իր Վէրը Հայաստանին է։ Ի՞նչ էր մինչև Արովեան հայ գրականութիւնը, մի անապատ, մի ցուրտ և սառն անապատ, ուր կեանքի ոչ մի նշոյլ չէր երեսում։ Կրօնականների ձեռքով գրուած մի քանի կրօնական բաները գրաբար լեզուով ժողովրդեան բոլորովին անհասկանալի էր։ գալիս է Արովեանը, նա ըմբռնում է, որ ժողովրդի ցաւերից պէտք է գրել, ժողովրդի կեանքը պէտք է պատկերացնել իւր բոլոր ուրախութիւններով, վշտերով, առաւելութիւններով և պակասութիւններով։

Գրել ոչ թէ միայն գրած լինելու համար, այլ այնպէս գրել, որ բոլորը հասկանան, այն լեզուով գրել, որով բոլորն են խօսում և նա սիրու է անում։ առաջին անդամ գրել իւր վէպը աշխարհիկ գաւառաբարբառով։ Գրում է գարաւոր գառնութիւնների, բռնութիւնների տակ ճնշուած հայ ժողովրդի կեանքի վէրքերը։

Գրում է առանձին եռանդով, գրչի առանձին զարկով։ Աշխատաւորը ամբողջ օր ու գիշեր չի հեռանում սեղանից, նորա գրիչը չի գաղարում գործելուց։ Ուտելու, խմելու և քննելու ժամանակը արհամարհուած է, մեծ գործ է կատարում հայերիս համար.—Ղաջառուր Արովեանը գրում է իւր Վէրը-Հայաստանին։

Արովեանի ժողովրդական կեանքից վերցրած այս վէպը թէև գեղարուեստական, վիպական տէսակետից զերծ չէ պակասութիւններից, բայց նա զգացումների ամբողջ մի ժող է։ ով որ մի անդամ կարդացել է Վէր-

քը, նա ցմահչի մոռանայ այն բուռն զգացումները, այն սրտամաշ խօսքերը, այն սիրուց ու վատից տոչորուած սրտի կոկիծը, որոնք մեծ վարպետութեամբ արտայայտուած են դրէի իւրաքանչիւր էջում։ Ո՞ր մի խոշոր զգացումներն ասես չկան այս դրբում։ — ընկերական սէր, ծնողական, ամուսնական սէր, սէր դէպի բնութիւնը, դէպի հայրենիքը, դէպի կրօնը։ Բոլոր այս վեհ զգացումները Աբովեանն անմահացրել է իւր վէպի հերոս Աղասու մէջ։ Այս անձնուէր, հայրենասէր, ծնողասէր և իւր դէպական պարզ բնաւորութիւն ունեցող երիտասարդի մէջ։ Եւ ով է արդեօք այդ հերոս Աղասին, եթէ ոչ նոյն ինքն Աբովեանը։ Աղասին դարերով ճնշուած, ստրուկ ժողովրդի բերանով արտայայտուած այն բուռն բողոքն է բռնութիւնների և աւերածների դէմ։

1848 թ. ապրիլի 2-ին Աբովեանը անյայտանում է իւր տանից և այլ ևս չի վերադառնում։ շատ կարծիքներ կան նորա մահուան մասին, և մենք մինչև այժմս անտեղեակ ենք մեր մեծ քէֆօրմատօրի որտեղ, որ անկիւնում թաղուած լինելուն, որ գոնէ կարողանայինք մեր երախտագիտութիւնը ցոյց տալ մի կոթողով այդ մեծ բարերարին։ Բայց միայն մարմարեայ կոթողները չեն, որ անմահացնում են մեծ մարդոց։ Աբովեանը մի-մի կոթող ունի մեր իւրաքանչիւրիս սրտի մի անկիւնում և այդ կոթողը ամուր է քան մարմարը, հաստատուն քան ինքը երկիրը և յաւիտեանս կմնայ նա մեր սրտերում, մինչ երկրագնդի մի որևէ մասում կվառուի չայլ պլպլացող ճրագը։

ՎԱՐԴԱՆ ԶՈՒԲՄԵԱՆ